ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.01.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/325

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Արմինե Մինասյանի (պետական հաշվառման համար՝ 264.1158189),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20543-2021 գրությամբ Ա/Ձ Արմինե Մինասյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.12.2021թ. թիվ 1/5722-2021 գրության հիման վրա, 14.12.2021թ. թիվ 26/26-1/20543-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արմինե Մինասյանին (հետայսու նաև՝

Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արմինե Մինասյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արմինե Մինասյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/325 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ «ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ա/Ձ Արմինե Մինասյանի էլեկտրոնային փոստին 30.11.2021թ. ժամը 17:08-ին ստացվել է ծանուցում՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որին ի պատասխան՝ նույն օրը ժամը 17:50-ին ուղարկել է Հավելված 1-ի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության շտկված տարբերակը՝ ներկայացնելով էլ. փոստի արտատպումը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.12.2021թ. թիվ 1/5722-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, գրավոր թարգմանության ծառայությունների ձեռքբերման նպատակով, հայտարարել է ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/5 ծածկագրով գնանշման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 23.11.2021 թվականին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել Արմինե Մինասյան Ա/Ձ-ն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված

փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Արմինե Մինասյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում՝ բացակայել է Հրավերով պահանջվող փաստաթուղթը՝ Հավելված 1-ը (Գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարություն):

Գնահատող հանձնաժողովը որոշել է՝ 30.11.2021թ.-ին նիստը կասեցնել առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մասնակիցը պատշաճ ծանուցված լինելով առկա անհամապատասխանության շտկման վերաբերյալ՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել փաստաթուղթը՝ Հավելված 1-ը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է ...:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Արմինե Մինասյան Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով՝ Ձեզ ենք տրամադրում Արմինե Մինասյան Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/325 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/325 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/325 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմինե Մինասյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Արմինե Մինասյանի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1-ը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 02.12.2021թ. ներառյալ) շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 30.11.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.12.2021թ. վերսկսելով նիստը՝ արձանագրել է, որ Ա/Ձ Արմինե Մինասյանի կողմից շտկում չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20543-2021 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 08.12.2021թ. թիվ 1/5722-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ա/Ձ Արմինե Մինասյանի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպես, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արմինե Մինասյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Արմինե Մինասյանի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 02.12.2021թ. ներառյալ) շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 30.11.2021թ. ծանուցել է Մասնակցին՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.12.2021թ. վերսկսելով նիստը՝ արձանագրել է, որ Ա/Ձ Արմինե Մինասյանի կողմից շտկում չի ներկայացվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ՍՑ-ՆԳ-2021/325 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի ընթացքում Ա/Ձ Արմինե Մինասյանը հայտնել է, որ «ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Ա/Ձ Արմինե Մինասյանի

էլեկտրոնային փոստին 30.11.2021թ. ժամը 17:08-ին ստացվել է ծանուցում՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որին ի պատասխան՝ նույն օրը ժամը 17:50-ին ուղարկել է Հավելված 1-ի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության շտկված տարբերակը՝ ներկայացնելով էլ. փոստի արտատպումը:

Վերը նշված փաստական հանգամանքով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 29.12.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/21712 գրությամբ դիմել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 08.12.2021թ. թիվ 1/5722-2021 գրության հիման վրա, 14.12.2021թ. թիվ 26/26-1/20543-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արմինե Մինասյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում քննվող ՍՑ-ՆԳ-2021/325 ընթացակարգի քննության նպատակով 23.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի ընթացքում Մասնակիցը հայտնել է, որ «ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցի էլեկտրոնային փոստին 30.11.2021թ. ժամը 17:08-ին ստացվել է ծանուցում՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որին ի պատասխան՝ նույն օրը ժամը 17:50-ին ուղարկել է Հավելված 1-ի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության շտկված տարբերակը:

Խնդրում եմ սեղմ ժամկետում հայտնել դիրքորոշում վերոնշվածի վերաբերյալ»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ 30.12.2021թ. թիվ 1.2/6118-2021 գրությամբ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը ներկայացրել է Ա/Ձ Արմինե Մինասյանի էլեկտրոնային փոստից 01.12.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղղված էլ. փոստի արտատպումը, որի համաձայն Ա/Ձ Արմինե Մինասյանը խնդրել է չդիտարկել իր կողմից ներկայացված Հավելված 1-ը:

Այսպիսով՝ ամփոփելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Արմինե Մինասյանը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, որից հետո մինչև 02.12.2021թ. ներառյալ (արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար տրված ժամկետ) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղղված գրությամբ խնդրել է չդիտարկել շտկումը, որը հանգեցրել է վերջինիս գնման

գործընթացին հետագա մասնակցության դադարեցմանը, այսինքն՝ Մասնակիցը «ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-22/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ա/Ձ Արմինե Մինասյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20543-2021 գրությամբ Ա/Ձ Արմինե Մինասյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արմինե Մինասյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**